

սակերներ էին. միտ ընդհանրապէս քիչ էին ուսում, ոչ  
թէ այն պատճառով, որ թանկ էր, ոչլ որովհետեւ զօրեղ  
մննդառութեան շատ քիչ կարիք էր զգացւում, — հարաւը  
իւր ազգեցութիւնն էր անում: Այժմ էլ Իտալիայում ա-  
ւելի կերակրուում են ցորենով, իսկ հումքը հովվմայեցու  
ամբողջ սեղանը կազմուած կլինէր միայն հացով, մինոյն  
ժամանակ ենթադրուում էր, որ իրենք էին և ազում և  
հաց թխում: Մի ձորտի օրականիկը Հոռվմում հաւասար  
էր մի խինիկ զարու<sup>1)</sup>: Բայց, որովհետեւ զարին համեղ  
չէր, ուստի նրա տեղ զործ էր ածւում ցորեն, որից մի  
մարդու համար որոշած էր 3—5 խինիկ: Հետեակ զօրքի  
զինուորի համար նշանակուած էր 4 խինիկ, իսկ 5 խինի-  
կը արդէն առատ անունդ էր հաշուում: Երեխաները մինչև  
11 տարեկան հասակը և կանայք ոչինչ չէին ստանում,  
ուստի և ենթադրուում էր, որ ազամարդը նրանց բաժին  
կհանէ իւր մասից: Եթէ մի զինուորի օրական ասլրուստի  
համար բաւականանում էր 4 խինիկ, այն ժամանակ այդ  
նոյնը սովորական մարդու համար շատ բաւական էր,  
որովհետեւ կանայք և երեխաները քիչ էին ուսում, այն-  
պէս որ կլոր թւով կարելի է իւրաքանչիւր մարդու հա-  
մար մի տարուայ մէջ 36 մօղ ցորեն հաշուել: Այս հաշ-  
ուի հիման վերաբ Հոռվմի բնակչութեան քանակը 800,000  
է որոշած: Պէտք է ենթադրել, որ Կոստանդին Մեծի  
ժամանակ բնակչութեան այս թիւր ոչ թէ պակասեց,  
այլ աւելացաւ, որովհետեւ սովորաբար մեծ քաղաքները  
դէպ իրենց են քաշում աղքատ պիւղացիներին, որոնք  
երկրադութեան անկման ժամանակ քաղաքներումն են  
աշխատանք վնալում<sup>2)</sup>:

<sup>1)</sup> Յայտնի է, որ հովվմէական մօղի հաւասար է Փրանտի-  
ական 8½ լիտրին, այնպէս որ մեր չետվերիկը հաւասար է 3  
մօղիյի, իսկ մօղին բովանդակում է 40 խինիկ: Խինիկը հաւա-  
սար է մօղիյի 1/10 մասին:

<sup>2)</sup> Եթէ մենք Կոստանդինի ժամանակից դառնանք մեր դա-  
րաշրջանի սկզբին, այն ժամանակ կստանանք ամենայաջող  
հակադրութիւնները: Խինիկի զործածութիւնը ճորտի կեսնքի

Նախնական այս դիտողութիւններից յետոյ այժմ  
դառնանք կոստաղին Մեծի ժամանակի քրիստոննեանների  
և հեթանոսների տոկոսային յարաբերութեան ճշտութեան։  
Ումանք ասում են, թէ քրիստոնեանները կազմում էին ամ-  
բողջ բնակչութեան՝  $\frac{1}{20}$ -րդ մասը, ուրիշների կարծիքով՝  $\frac{1}{10}$   
մասը, Այս հարցի մանրամասը քննութեամբ զբաղուեց 1887  
թ. Մաքս Վիկտոր Շուլցէ (V. Schultze, Geschichte des  
Untergangs des griechisch—römischen Heidenthums. I. Staat  
und Kirche im Kampfe mit dem Heidenthum. Jena 1887): Նա այն եղրակացութեան է եկել, որ կոստանդին Մեծի  
ժամանակ քրիստոնեանների քանակը առնուազը 10 միլիոն  
էր, իսկ հաւանականորէն 16 միլ. էր, որ կազմում է<sup>1/6</sup>  
մասը բնակչութեան։ Սակայն այս հետախուզութիւնը  
շատ դժբաղտ հետեանք ունեցաւ, — այդ դիրքն ընկաւ  
Բերլինի համալսարանի ոլոֆեսոսոր Իւլիուսէրի ձեռքը  
զբաղնութեան համար (Theolog. Literaturzeitung. 1887  
№ 22, 513—518): Սա սկսեց աշխատել Շուլցէի զրքի

---

մէջ այնքան բնորոշ էր, որ Կորնթացիք կոչում էին շօնէօմէտրա։  
Նրանք շատ ճորտեր ունէին (իւրաքանչիւր աղատորեարին ընկնում  
էր 15 ճորտ), ուստի և նրանք ամբողջ օրը նրանց համար խինիկ էին  
չափում։ Այստեղ ոլէտք է համեմատել Նոր-Կտակարանից հետեւեալ  
կտորները. Յայտ. Զ. 6. Մատթ. ի. 2. 13. 14. Ղուկ. Ժ. 35. Աղորմած  
Սամարացու առակից երեսում է, որ Պաղեստինում 2 դինարը կազ-  
մում էր բաւական մեծ զումար—Սամարացին յանձնելով հիւան-  
դին հիւրանոցի տիրոջ խնամքին, կատարելապէս բաւական է  
համարում դեղօրայքի և հիւանդին պահելու համար վճարել երկու  
դինար։ Իսկ այզու մշակների առակից երեսում է, որ մի դինարը  
իրրե օրավարձ առատ վարձատրութիւն էր հաշւում։ Յայտնութեան  
մէջ ապագայ դժբաղութիւնները նկարագրելով տուած է թէ,  
մի խինիկ ցորենը և 3 խինիկ զարին կվաճառուեն մի մի դի-  
նարով։ Ուրիմն, մշակը ստանալով օրավարձ մի դինար, ծախսում  
է ամբողջը, իսկ եթէ մի որ և է օր չաշխատէր, դատապար-  
տուած կլինէր քաղծածութեան։ Հոռվմում մօղին արժէր մի  
դինար, այնպէս որ, մշակը լաւ տիրոջ մօտ ծառայելով Քրիս-  
տոսի ժամանակ կարող էր աշխատել մի օրում ութ օրուայ ցորեն,  
այս մեզ ենթագրել է տալիս, որ Հոռվմում ստորին դասակարգն  
էլ տնտեսապէս բարւոք վիճակ էր վայելում։

հիման վերայ քրիստոնեաների քանակը որոշել և զարմանալի հետևանքի հասաւ, այն է, որ քրիստոնեաների քանակը Կոստանդին Մեծի ժամանակ 4 և ոչ թէ 16 միլիոն էր: Եթէ քրիստոնէական ամենամեծ երկրում Ասիայում Շուլտցէի տուած տեղեկութիւնների հիման վերայ քրիստոնեաները կազմում էին բնակչութեան  $\frac{1}{19}$  մասը, այն ժամանակ ի՞նչ եղանակով նրանք հոռվմէական կայսրութեան ամբողջ բնակչութեան  $\frac{1}{6}$  մասը կազմել կարող էին: Այս աւելի զարմանալի է թւում, որովհետեւ արևմուտքում քրիստոնեաների թիւը շատ քիչ էր,—իտալիայում Հռովմի հետ, Ափրիկայում, Իսպանիայում և Գալլիայում 400,000 էին հաշւում, իսկ ընդհանուրապէս Գերմանիայի, Բրիտանիայի և Բալկանեան թերակղու հետ ի միասին հազիւ թէ  $\frac{1}{2}$  միլիոն լինէին:

Կոստանդին Մեծի ժամանակի քրիստոնեաների քանակը ոմանք որոշում են առաջին Տիեզերական Ժողովին ներկայ եղող եպիսկոպոսների թուով: Սակայն եպիսկոպոսների քանակը սլայմանական արժէք ունի: Եպիսկոպոսների ամենալաւ անուանացուցակից, որ պահուած է ասորերէն լեզով, երևում է, որ dioecesis Oriens, որի զահանիստը Անտիոքն էր, Ժողովի մէջ ունէր 91 եպիսկոպոս. dioecesis Asia (զահանիստը—Եփեսոս) — 51 եպիսկ., dioecesis Pontus (զահանիստը—Կապաղովիլիայի Կեսարիան, որի հետ հաշւում էին, նաև Քաղկեդոն, Նիկիա, և ընդհանուրապէս փոքր Ասիայի հիւսիսային մասը) — 37 եպիսկ.: Եպիսկոպոսը Թերայիդայի հետ — 19 եպիսկ., Պաղեստինը — 19 եպ.: Բայց եպիսկոպոսների թուի պակասելն արդեօք քրիստոնեայ ազգաբնակութեան քանակի նուազելն է նշանակում: Ոչ, որովհետեւ նախը բոլորն էլ միևնոյն չափով Տիեզերական Ժողովի խնդիրներով շահագրգուած չէին, և Երկրորդ՝ բոլոր թեմերն էլ բեծութեամբ իրար հաւասար չէին:

Ափրիկայում 294000 քո. կիլոմետր տարածութեան վերայ, 484 թուին, 450 թեմ կար, այսինքն, իւրաքանչիւր թեմին ընկնում էր 680 քո. կիլոմ..: Ենթագրենք, գործնականապէս բոլորովին անհնարին մի բան, որ իւրաքանչիւր

թեմ կոլոր շրջան էր ներկայացնում և դահանիստ քաղաքը գտնվում էր կենդրոնում։ Այն ժամանակ կիսատրամազիծը հաւասար կլինէր  $1\frac{1}{2}$  կիլոմ.։ Ռուսաց արշինը հաւասար է  $71,119$  սանտիմ., այնպէս որ կիլոմետրը վերստից մի քիչ փոքր է։ Ուստի և եղիսկոպոսը հասարակ ցեխուն ճանապարհով թեմը կարող էր պատել  $1\frac{1}{2}$  ժամում։ Dioecesis Oriens-ի եպիսկոպոսութիւնները հաւասար էին  $1492$  քո. կիլոմետր տարածութեան, Պօնտոսինը՝  $4272$  քո. կիլոմ.-ի և Ասիա-յինը՝  $799$  քո. կիլոմետրի, որ մօտ է Ափրիկայի եղիսկոպոսութիւնների տարածութեանը։ Եւրածելով մի յայտարարի, կարելի է ասել, որ մեր Նովգորոդի թեմում Պօնտոսի թեմի չափ  $29$  Կառավարովկիայի  $39$ , արևելեան  $82$ , ասիական  $153$  և Ափրիկայի  $185$  թեմ կողարունակէր։  $185$ -ի և  $29$  տարբերութիւնը խիստ ճնշող է,  $29$ -ի և  $153$ -ի միջի տարածութիւնն էլ պակաս չէ, եթէ արևելեան թեմները վերցնենք։  
Եթէ մենք որ և է մանրամասն տեղեկութիւն ունենք, այդ միայն կիրիացի Թէոդորիտի թեմի-Կիրեստիկի մտախն է։ Լեռն Մեծին ուղղած թղթում զրում է, որ նա ունի  $800$  պարիկի, այսինքն ծխականներ։ Քաղաքական իշխանութեան առաջ — praefectus praetorii — նո վկայում է, որ Կիրեստիկն ունի  $40$  millia passuum երկարութիւն և  $40$  millia pass. լայնութիւն։ Այս վկայութիւնը ճիշտ է և քարտէզի վերայ համեմատութիւն անելով չէ հերքուում։ Թէոդորիտի խօսքով Կիրեստիկն ունէր  $3498$  քո. կիլոմ., իսկ քարտէզի վերայ  $3562$  քո. կիլոմ. է։ Այսպեսից երեսում է, որ այս եղիսկոպոսութիւնը որևելիան միւս եղիսկոպոսութիւնների հետ անհամեմատելի է։ Այսպիսով քրիստոնեանների քանակը եղիսկոպոսների թուռով որոշելը ոչ մի հետևանքի չի հասցնում<sup>1)</sup>։  
Աղքուանդրիայի քրիստոնեայ աղքարնակութեան մտախն եղած տեղեկութիւնները վերցրուած են Աթոնոսի Հաղաղովութիւնից, որ ուղղած Կոստանտին (п. 16)։

<sup>1)</sup> Համմ. Վ. Վ. Բօլոտովի 1906 թ. «Прибавление къ Перк. Вѣдомостямъ»-ի մէջ այն մասը, որտեղ տպուած է նրա դիտողութիւնները՝ «Епархии въ древней церкви» վերնագրով. № 3 եր. 99—105.

Միանդամայն սկստահական հանգամանքներ որովել են Աթանասին այդ տեղեկութիւնները տալ: Հոչակաւոր Կղեռապատրան ի պատիւ կեսարի մի ժամանակ կամեցաւ կէս-տաճար, կէս թանդարան՝ որուց շինել: Հանդէս եկաւ Կաւարօն տաճարը՝ ի սկստիւ կեսարի: Այս տաճարը Դ. դարում յանձնուեց քրիստոնեաններին իրենց եկեղեցի դարձնելու համար: Շինութեան համար լինելիք ծախքը յանձն տուաւ կոստանդ կայսրը, որի ժամանակ և սկսութէ եկեղեցու օծումը տեղի ունենար<sup>1)</sup>): Շատ բնական է, որ ինքը կայսրն էլ հետաքրքրում էր եկեղեցու օծումով: Նա ինքն ուզում էր դալ Աղքասանդրիս, բայց չար լեզունները հաղորդեցին կոստանդին, որ Աթանասն արդէն տաճարի օրհնութիւնը կատարել է և նա ստիպուած եղաւ այդ առթիւ մանրամասը բացատրութիւններ տալ:

Նա դրում էր. «Տաճարի օրհնութիւնը դեռ չէ կատարուել. կ'օրհնես նրան ինքդ, ով կայսր»: Յիմար լեզուններն առւմեն, թէ օրհնութիւնը տեղի է ունեցել, որովհետեղատկին այնտեղ տաճարի մէջ աստուածաշատութիւն կատարուեց: Երբ նրա նախորդը՝ Աղքասանդրը «Թէառա» կոչուած եկեղեցին էր կառուցանում, այն ժամանակ օրհնութիւնը կատարուեց յետոյ, թէև մեծի պահոց օրերին աստուածաշատութեան համար հաւաքւում էին եկեղեցի: Արեմուտքում սովորութիւն կար, որ նոր կառուցւող եկեղեցու մէջ աստուածաշատութիւնը կատարւում էր օրհնութիւնից առաջ, իսկ յետոյ կատարւում էր տաճարի հանդիսաւոր օծումը: Ի հարկէ, Աթանասը տունձնապէս շեշտում է, որ չօրհնուած տաճարը սրբւում է աղօթքներով: Աղքասանդրիայի բոլոր եկեղեցիները «Թէառա»-ի հետ միասին, ներկայումս, աստուածային ողորմութեամբ, արդէն շատ փոքր էին թուում, և երբ մարդիկ հաւաքւում էին քառասնորդական օրերին, այն ժամանակ վիստում էին շատ երեխաններ, երիտասարդ կանայք, պառաւներ և երիտասարդ մարդիկ: Նրանք այնպէս սեղ-

<sup>1)</sup>) Համմ. Վ., Վ., Բոլոտով, Դիոսկորի պատմութիւնները «Քաղկեդոնի ժողովի մասին»: Խրո. Պետք. 1885. I. 32—33.

մուած են լինում, որ հարկաւոր էր լինում ձեռների վերայ դուրս տանել: Թէև վիրաւորուածներից ոչ մէկը շմեռաւ, սակայն տրտունջ առաջ եկաւ: Եթէ այդպիսի ճնշումն լինում էր քառասնորդական պահոց օրերին ինչ կլինէր հապա Զատկի օրերին: Աթանասն ասում է, որ նա առաջարկում էր ժողովրդին հաւաքուել զանազան տեղեր, սակայն նրան ոչ ոք լսել չէր ցանկանում:— կամենում էին անպայման միասին լինել և նրան առաջարկում էին ժամերգութիւն կատարել անապատում, բայց երկնքի տակ, միայն թէ բոլորը միասին լինէին: Նոր կառուցւող եկեղեցին կարող էր բովանդակել բոլորին և Աթանասը վճռեց Զատկի օրը այնտեղ կատարել պատարադը<sup>1)</sup>:

1) Մեր զրականութեան մէջ տարօրինակ հայեացքներ են արտայայւում, որպէս թէ Աթանասին մեղաղրում էին այն բանի համար, որ դեռ չօծուած եկեղեցում աստուածաբաշտութեան կարդ կատարեց, և որպէս թէ, ինքնէլ այդ չէ մերժում, որ անկանոն է վարուել և որպէս թէ ներողութիւն է խնդրում: Եղելութիւնը այս ձևով նկարազրելը միամտութիւն է, Աթանասը սրա համար չէ որ իրեն արդարացնում է: Եկեղեցու գաղափարը բոլորովին իրական էր: Երբ մի անգամ ժողովուրդը իւր եպիսկոպոսի հետ էր, նրան ոչ ոք չէր կարող մեղաղրել պարասինազողացի մէջ: Եւ եթէ ժողովուրդը իւր եպիսկոպոսի անձնաւորութեան վերաբերմամբ չէր կասկածում, այն ժամանակ նա իրաւոնք ունէր աստուածաբաշտութիւն կատարել նաև չօծուած եկեղեցու մէջ, չէնց ուստի եկեղեցում այժմեան զորվուրան որբոց մասունքներով (անտիմիսը) հաստատում է այն, որ եպիսկոպոսն իրաւոնք է տուել աստուածաբաշտութիւն կատարել այդ եկեղեցում: Յիշենք, որ նահատակ Լուկիան անտիոքացին, իւր նահատակութիւնից առաջ առանց զժուարանալու հաղորդութեան ու. խորհուրդը կատարեց իւր կրծքի վերայ: Նա պարկած էր բանդում տանջանքներից ուժասպառ եղած և իւր կրծքի վերայ ու. հաղորդութեան խորհուրդը կատարեց: Երբ Կիրիացի Թէոդորիուր այցելեց մի փակուած ճզնաւորի, հարցրեց նրան, թէ ինչով հաճութիւն պատճառել կարող է: Ճզնաւորը յայտնեց եպիսկոպոսին իւր վիշտը, որ ինքը հրաշալի երդիչ լինելով, շատ տարի է, ժամանակարդութեան կատարումը չէ տեսել: Թէոդորիուր հարեան եկեղեցուց սրբազն անօթներ պահանջեց, հրամայեց սարկաւազներին հէնց ճզնաւորի մօտ բռնեն այդ անօթները և ինքը ժամերգութիւն

Աթանասը հաղորդում է մեզ շատ արժեքաւոր տեղեկութիւններ, որ իւր ժամանակ Աղեքսանդրիայում, մի կողմից, այնքան շատ քրիստոնեայ կար, որ չեն տեղաւորւում մի տաճարի մէջ, իսկ միւս կողմից—և այնքան քիչ, որ բոլորը կարող էին Կատարելու տաճարում տեղաւորուել: Սակայն այս տեղեկութիւններից ի՞նչ թիւ ենք ստունում մենք:

Հոռվիմի ո. Պետրոսի տաճարը կարող է պարունակել 54,000 մարդ, Միլանի տաճարը—37,000, Փարիզի նշանաւոր տաճարը—21,000: Ես օտար տեղեկութիւններ եմ բերում, և դուք կարող եք հարցնել, թէ ինչու ես Պետերբուրգի Եկեղեցիների մասին չեմ խօսում: Ճիշտն ասած,— ես չոխեմ. ձեռքիս տակ եղած ճանապարհորդական ուղեցոյցները բաւական տարօրինակ տեղեկութիւններ են հաղորդում: Իսահակիան տաճարի համար տուած է, թէ նրա հիմքի մէջ որչափ երեք սաժեն երկարութեամբ ցիցեր են անկուած, իսկ չի ասուած, թէ այդ տաճարը որչափ ազօթողներ կարող է բովանդակել: Իզմայիլեան դնդի տաճարի համար տուած է, թէ 37 սաժեն բարձրութիւն ունի, իսկ թէ որչափ մարդ կրավանդակի—ոչ մի խօսք: Սակայն այն գլխաւոր ոլատճառը, որի հիման վերայ գերադասում են վերև բերուած տեղեկութիւնները, հետեւեալն է. թէ Դ. դարում, և թէ ուշ ժամանակներում արևելեան եկեղեցիների մէջ, աստուածականութիւնը լսում էին, եթէ ոչ բոլորը, գոնեա, շատերը նստած, և անօթօւ—«Ոքու»,\* գոշումը բոլորին ոտի կանդնելու առաջարկութեան միտքն անէր: Կարելի է ենթադրել, որ Աթանասի ժամանակ Զատկին բոլորը չեն նստում, այնուամենայնիւ նստողների թիւն էլ պակաս չէր: Արևմտեան երկրներում այս սովորութիւնը պահպանուել է մինչև այժմ էլ, ուստի և ստիպուած ենք օգտուելու արևմտեան եկեղեցու տեղեկութիւններով քան մեր:

Կատարեց: Այս բոլորից յետոյ Աթանասին ոչ ոք մեղագրել չէր կարող որ նա չօծուած տաճարում ժամերգութիւն է կատարել:

\* Հայերէնում՝ օրթի, պրօսիում՝—«Երկիւղածութեամբ լուարութիւն. Հ. Թ.

Հոռվմի տաճարը պարունակում է 54,000 մարդ: Ենթադրենք, որ նոյնչափ կարող էր բովանդակել և Աղեքսանդրիոյ նոր կառուցւող տաճարը: Սակայն, այն ժամանակ մենք այսքան էլ որոշ եղբակացութեան չենք հասնի:

Աթանաս Մեծի ժամանակ քրիստոնեաների քանակը շատ մեծ չէր, որովհետեւ շատերը մերժուում էին հասակն առած ժամանակ, իսկ ումանք էլ մերժութիւնը յետաձգում էին մինչև ծերութեան օրերը: Երեխաները նոր էին պատրաստում քրիստոնեայ դառնալու, իսկ երիտասարդները դեռ ևս նորահաւատ էին, միայն հասակն առած մարդիկ մերժուելով, կատարեալ քրիստոնեայ էին դառնում, և հաւատցեալների պատարադին ներկայ լինում: Բայց, Աթանասը հաղիւ թէ միայն մերժուածներին աչքի առաջ ունի (որոնք իրաւունք ունէին հաւատացեալների պատարագին ներկայ լինելու): Անհաւատալի է, որ նորահաւատները չցանկանանային քրիստոնէական զատկական աստուածալաշտութեանը ներկայ լինել: Հաւանականօրէն, Աթանասը հաշուի է տոնում տաճարում ներկայ եղող ոչ միայն հաւատացեալներին, այլ և նորահաւատներին: Նա սկսում է թուել երեխաներից, հաշուում է երիտասարդներին և վերջացնում ծերերով: Այստեղ կային և երեխաներ, կային ծերեր, պառաներ, բացի հիւանդներից: Կարելի է ենթադրել, որ ոմանք մնում էին տանը, ընտանեկան աշխատանքների համար: Հին ժամանակները տան ծառայի հարցը ձորտերի հարց էր. իսկ ձորտերը կարող էին և քրիստոնեայ չլինել: Հետեալէս տանը մնացողների թիւը շատ մեծ չենք կարող ընդունել: Երկի այն ժամանակ տանը մնում էր  $\frac{1}{5}$ -ը (և այս տակտուն է): Եթէ ենթադրենք, որ տաճարում ներկայ էր լինում 50,000 մարդ, այն ժամանակ մենք կունենանք Աղեքսանդրիայում մինչև 70,000 քրիստոնեայ: Եթէ ենթադրենք, որ Աղեքսանդրիայի բնակչութեան քանակը  $\frac{1}{2}$  միլիոնի էր հաւատը, այն ժամանակ կստանանք քրիստոնեաների շատ չնշին տոկոս, իւրաքանչիւր 7-ից մեկը քրիստոնեայ էր, զուցէ և տասից մեկը:

Ապա մենք ունենք տեղեկութիւններ Հոռվմի եկեղե-

ցու մասին: Այդ տեղեկութիւնները քաղում ենք Հռովմի Կորնելիոս Եպիսկոպոսի մօտ 252 թ. գրած թղթերից: Նա խօսելով Նովատեսն աղանդի մասին, նկատում է, թէ նա աղանդ տռաջ բերելով, շրարեհաճեց ուշադրութիւն դարձնել, որ հռովմէական Եկեղեցին սակաւամարդ չէ. հռովմէական Եկեղեցին ունէր 46 քահանայ, 7 սարկաւագ, 7 կիսասարկաւագ, 42 ուղեկից (ակոլուֆ), 52 է կղորկիստ և բնթերցողներ օստիարների հետ (ostiarii=πολωροί), դոնապաններ), 1500-ից աւելի այրիներ, (օπէր ոչ շահագութափակաց), որոնց մէջ էին նաև օգնութեան կարուները (օծու Աւազուցանուց), և այդ բոլորին կերակրում է Աստուծոյ ողորմութիւնը և մարդասիրութիւնը (Eus. h. e. VI, 43, 11): Ահա հռովմէական Եկեղեցու մասին Եղած տեղեկութիւնները:

Այստեղ պէտք է մի կողմ թողնել այն բացատրութիւնը, որին հետեւմ են շատերը: Աֆրիկայի Միլեացի Օպտաս Եպիսկոպոսը Դանատիանների հերձուածի մասին մի զիրք էր գրում: Նա պատմում է, որ Դ. դարի սկզբին Դանատեանների մօտ յանձին Գարրենացի Վիկտորի հանդէս է զալիս մի Եպիսկոպոս: Այս Victor garbensis-ը Նումիութիայի 305 թ. ժողովին ներկայ էր: Օպտաս Եպիսկոպոսը Վիկտորին բնորոշում է ինչպէս առանց հօտի հոգիւ, չէ՞ որ ամենաչնչին թւով հետեւողներին ժողովուրդ չի կարելի անուանել: Վիկտորի հետեւողների համար Հռովմի 40-ից աւելի բազիլիկների մէջ տեղ չդանուեց: Ուրեմն Հռովմէական քրիստոնեանները Դ. դարի սկզբին 40 աւելի բազիլիկ ունեին: Որովհետեւ Կորնելիոսն էլ հաշւում է 46 քահանայ, ուստի և զիսնականները ենթադրում են, որ Կորնելիոսի ժամանակ քրիստոնեաններն ունեին մինչև 40 աստուծութաշտական աղօթատներ:

Ես կարծում եմ այդ ուղիղ չէ: Կորնելիոսը 7 սարկաւագների և 7 կիսասարկաւագների անուն է տալիս: Հռովմէական Եկեղեցին 7 թուին միշտ էլ հաւատարիմ է մնացել, այն ժամանակ շատերն ենթադրում էին, թէ իւրաքանչիւր Եկեղեցու մէջ (Եպիսկոպոսութեան) եօթ սարկաւագից և կիսասարկաւագից աւելի չպէտք է լինի: Կիսասարկա-

ւազների պաշտօնին համահաւասար ոլահպահնեռում էր ուղեկիցների պաշտօնը, որ և նոյն չափ յարգի էր, որչափ և կիսասարկաւագինը։ Ուղեկիցների մասին հասկացողութիւնն իւր մէջ պարունակում է հետեւելու, ուղեկցելու դադախարք։ Կորնելիոսը 42 ուղեկից է թւում, որպիսի թիւն բաժանելով եօթով՝ ստանում ենք 6, իսկ բաժանելով 14-ի վերայ—երեք մարդ։ Քաղաքական տեսակետից Հոռվմը բաժանեռում էր 14 շրջանի (regiones)։ Քրիստոնեաների նկատմամբ էլ Հոռվմի 14 մասի բաժանելը անվիճելի փաստ է. 7 սարկաւագ և 7 կիսասարկաւագ = 14։ Սոքա այն անձինքն էին, որոնց յանձնուած էր 14 շրջանների կառավարութիւնը, իսկ սարկաւագներին և կիսասարկաւագներին որոշ նահանգի մէջ շրջագայութեան ժամանակ ակօլութները (ուղեկիցներ) պարտական էին ուղեկցել։ Այսպիսով մենք ունենք մի սարկաւագ և մի կիսասարկաւագ զլուխ անցած և նրանցից իւրաքանչիւրի մօտ երեք ուղեկից։ 4 հոգի կարող էին, օրինակ, եթէ կարիք լինէր հիւանդին ամենայն հեշտութեամբ տեղափոխել, և այսպիսով 14 թիւը միանդամայն հասկանալի է և իրական նշանակութիւն ունի։

Այն ժամանակ բաւականաշտի կ'պարզուի նաև 52 թիւը, որով Կորնելիոսը նշանակում է էկզորկիստների, զոնապահների և ընթերցազների թիւը։ Էկզորկիստները արտասանում էին երդման աղօթքները, օրինակ մկրտութեան ժամանակ։ Էկզորկիստների, զոնապահների և ընթերցողների թիւը միմիանց հաւասար չի կարելի ընդունել։ Անկասկած է, որ իւրաքանչիւր աստուածաշտական տան համար հարկաւոր էր մի ընթերցող և մի զոնապահ (օստիար), Այն ժամանակ քրիստոնեաները շատ զգոյշ պէտք է առբեին. — սիրենք միմիանց» արտայայտութիւնը նոյն իսկ այն ժամանակ ձեռկերում էին այսպէս. «Նայեցէք միմիանց և ձանաշեցէք միմիանց» (նախազգուշութիւն ոչ-քրիստոնեաների գէմ). այն ժամանակ ժամերգութիւն կատարել տունց զոնապահնի, անզգոյշ բան կլինէր։ Ասհրաժեշտ էր նաև ընթերցողը, ինչպէս զոնապահը։ Սակայն 40 բազիլիկների վերայ չէր կարելի 52 մարդու բաժանել

և իւրաքանչիւրին մի մի ընթերցող և դռնապան տալ: Հետեապէս բազիլիկների թիւր պակաս էր. հեշտութեամբ կարելի է ենթադրել, որ մնում էր 14 ընթերցող և 14 դռնապան, գուցէ սրանց թիւն աւելի էր, —ուստի հաշուելով երկ-երկու ընթերցող իւրաքանչիւր աստուածալաշտական ժողովարանում, որից կստանանք 28 ընթերցող, + 14 դռնապան, + 10 էկղորկիստ — 52: Հետեապէս շատ հաւանական է, որ այդ միջոցին իւրաքանչիւր շրջանի մէջ կար միայն մի աստուածալաշտական ժողովարան, որտեղ հաւաքւում էին աստուածալաշտութեան համար մեծ տօներին:

Սակայն մնում է հաշիւ անել, թէ այդպիսի մասնաւոր բազիլիկը որքան մարդ կտրող էր պարունակել: Դժբաղվար ճիշտ տեղեկութիւններ չունենք, հնարաւոր է միայն մօտաւոր հաշիւ կաղմելը: Հին քրիստոնեանները ժամերգութեան ժամանակ նստում էին, խել կանգնած մարդը բանում է 0,4 քառ. մետր տարածութիւն, հետեապէս 10 հոգի բանում են 4 քառ. մետր տարածութիւն. և ուրիշն շատ մեծ դահլիճ է հարկաւոր 1000 մարդ բովանդակելու համար. (օրինակ՝ 5 սաժ. լայնութիւն և 20 սաժ. երկարութիւն): Շատ բնական է, որ հոռվմէական քրիստոնեանները այնքան հարուստ չէին, որպէսզի շատ դահլիճներ ունենային, այդպիսի քանակութեամբ մարդիկ բովանդակելու համար: Ուստի և մենք պէտք է ենթազրենք, որ աստուածալաշտութեան ժամանակ հաւաքւում էին ոչ թէ բոլորը միանդամից, այլ իւրաքանչիւրը դալիս էր նշանակուած հերթին: Մենք կարող ենք հաւասացեալների 14—15 հազար թուից սկսել: Այս թիւր կրկնապատկելը շատ մեծ համարձակութիւն կլինէր (30,000 հաւանականորէն տակամ):

Ապա մենք տեղեկութիւններ ունինք 1<sup>1</sup> 2 հազար այրիների մասին, որոնց թւում են նաև օդնութեան կարուները: Շատ զժուար է վճռել, թէ օդնութեան կարունեանց քանակութիւնից ի՞նչպէս եղբակացնել ընդհանրապէս քրիստոնեանների որոշ թիւր: Յովհաննէս Ռոկեբերանը իւր քարոզներից մէկի մէջ ասում է, որ Անտիոքի քնակչու-

թեան քանակի մէջ  $\frac{1}{10}$ —մասը հարուստ էին,  $\frac{1}{10}$ —աղքատ, որեմն նա ընդհանուր աղքատներին որոշում է ընակչութեան  $\frac{1}{10}$  մասով։ Բայց իրօք բոլոր աղքատներն էլ եկեղեցու օղնութեան կարիքը չունեին։ Նրանցից ոմանք նպաստ էին ստանում ժամանակ առ ժամանակ։ Հետեւողէս աղքատներին ամբողջի  $\frac{1}{10}$  մասով որոշելը համարձակութիւն է։ Եթէ այդ յայտարարութիւնը աչքի առաջ ունենաք,  $1500$  աղքատ մարդուց պէտք է եզրակացնել քրիստոնեաների ամբողջ թիւը  $15,000$ ։ Սակայն այս թիւը շատ մէծ է։ 1880 թուի աշխարհազրութեամբ Փարիզում ցուցակադրած են  $130,000$  մարդ, որոնք ճանաչուել են իրեն բոլորովին աղքատ, և 18 ընակչի ընկնում է 1 աղքատ։ Այդ հիման վերայ կարելի է ընդունել, որ եթէ հոգմէական քրիստոնեաների մէջ նոյն իսկ 20 մարդի ընկնէր 1 աղքատ, այդ ժամանակ քրիստոնեաների ընդհանուր թիւը Գ. դարի կէսերին կլինէր  $30,000$ .

Թէ որչափ աննշան կարող էր լինի նոյն իսկ յետին ժամանակներում քրիստոնեայ ազգաբնակութիւնը համեմատաբ բողմամարդ քաղաքներում, ցոյց է տալիս Գաղայի Պորֆիրիոսի վարքագրութիւնը, որ կազմել է նրա սարկաւաղ Մարկոսը (IV դարի վերջին—V դարի սկզբին)։

Այս վարքագրութիւնը, իրեն յիշատակարան, պատմաբնի համար բաւական մէծ տուղծուած է ներկայացնում, սակայն գժուարութիւնները կասկածելու առիթ չեն տալիս, թէ այդ ցուցմունքները ձշմարտութիւնից հեռու են։ Գաղան Պաղեստինի ծովափնեայ հարուստ և բաւական խիտ ընակչութեամբ քաղաքներից մէկն էր։ Այդ երեսում է նրանից, որ Գաղան ունէր հեթանոսական ութ հատ տաճար։ Եւ որովհետեւ հեթանոսական աստուածուաշտութիւնը զոհարերութեամբ էր լինում, իսկ զոհարերութիւն ամեն տեղ կարելի էր կատարել, ուստի կարելի է ենթադրել, թէ այդ տաճարները որքան ժողովրդի էին բաւականութիւն տալիս։ այն է—համարձակութիւն չի լինի ասելը, որ Գաղայի ընակիչների քանակը մինչև  $30—40$  հազարի

Եր հասնում: Պորֆիրիոսը առնուազը Գաղայի հինգերորդ  
եպիսկոպոսն էր, (առաջինն էր Սիլվան, որ հալածուեց  
Մակումինի ժամանակ): Երբ նա եկաւ Գաղա եպիս-  
կոպոսի պաշտօնով հեթանոս ազդարնակութիւնը վերա-  
բերուեց նրան շատ թշնամաբար: Ինչպէս յայտնի է Պա-  
ղեստինի բարօրութիւնը կախուած էր վաղաժամ անձրե-  
ներից: Անձրե պէտք է զար նոյեմբերի Յ-ի մօտերքը,—  
և Պէորդի տօնի օրին՝ և եթէ անձրեն սկսւում էր այդ  
օրից 15 օր առաջ, այն ժամանակ ըոլորն ուրախանում էին,  
մինչդեռ Պորֆիրիոսի Գաղայի աթոռը ձեռք բերելու տա-  
րին իւր ժամանակին անձրե չեկաւ: Այդ դեռ ևս քիչ էր,  
անցաւ նոյեմբեր ամիսը, դեկտեմբերը, եկաւ երրորդ  
ամիսը, իսկ անձրե չկար ու չկար: Այն ժամանակ հեթա-  
նոսներն սկսեցին ասել, որ անձրե չդալու պատճառը  
Պորֆիրիոսն է, որովհետեւ յանձին նրա իրենք թոյլ են տուել  
քաղաք մտնելու Մարնա Աստուծու թշնամուն: Երրորդ  
ամսի 7-րդ օրը հաւաքուեցին տղամարդիկ, կանայք և  
երեխաներ թուով 280 և ինգրեցին Պորֆիրիոսին քրիս-  
տոնէական աղօթք կատարել և քաղաքի շորս կողմը շրջել:  
Չի կարելի ենթագրել, որ այսուեղ խօսքը քրիստոնեաների  
կողմից գնացած պատղամասորների մասին է, որովհետեւ  
այդպիսի հասարակ դեպքի համար դորա կարիքը չկար:  
Կարելի է ընդունել, որ հենց այս 280 մարդիկն էլ կազմում  
էին Գաղայի քրիստոնեայ ընակշութիւնը: Գուցէ և նոյն իսկ  
հաւանական է, որ այս թուի մէջ չկան ծերերը, փոքրահա-  
սակներն և սկահապանները: Այս աղօթքը կատարուեց այլինէի  
4-ին (յունուարի 4): Բայց, երբ քրիստոնեաները քաղաքի  
շորս կողմը շրջելով յետ դարձան, դռները փակած զտան:  
Բարերախտաբար անձրեի հատիկներ սկսեցին թափուել, ո-  
րից յետոյ էլ անձրե եկաւ: Հեթանոսները բաց արին քաղաքի  
դռները, մեծ բազմութեամբ ուղեկցեցին քրիստոնեաներին  
քաղաքի միջով և ոմանք էլ զոչում էին. «Մեծ է քրիստոնեա-  
ների Աստուծը»: Պատմաբանը յիշատակում է, որ այդ օրը  
հեթանոսներից քրիստոնեայ դարձան 127 մարդ, որոնցից 78  
տղամարդ, 35 կին և 14 երեխաներ էին, որոնց թւում և 5

աղջիկ կար: Անձրեն այնքան յորդ էր, որ բնակիչներն սկսեցին երկիւղ կրել իրենց տների խորտակման համար, որոնք շինուած էին շթրծած աղիւսից: Բոլոր այս մանրամասնութիւնները իրաւունք են տալիս ենթադրելու, որ թուերը ճիշտ են հաղորդած: Քրիստոնեաների թիւը հետեալէս շատ քիչ էր: Նրանց թիւը հազիւ 400-ի էր հասնում: Այդ երեսմ է և նրանից, որ վերջերը, երբ քրիստոնէութիւնը կատարեալ ծաղկման մէջ էր, երբ կործանուեց Մարնի կուռքը և շինուած էր քրիստոնէական տաճար, այն ժամանակ էլ քրիստոնեաների թիւը շատ մեծ չէր: Այդ երեսմ է այն հանգամանքից, որ ժողովուրդը դժոհուած էր Պորֆիրիոսից, թէ տաճարի համար շատ մեծ շափ է վերցրել, և ասում էին. «Ի՞սչու նա այդպիսի մեծ տաճար է շինում, երբ ժողովուրդը քիչ է»: Իսկ Պորֆիրիոսը միմիթարուած էր նրանց թէ Աստուած կլցնի տաճարը և կմեծացնի հաւատացեալների թիւը:

Եթէ այս բոլոր թուերն ի նկատի առնենք, կտեսնենք, թէ քրիստոնեաների որքան քիչ քանակութիւն էր հարկաւոր թեմ հիմնելու համար, իսկ այդ հանգամանքն էլ արգելք սկստի լինի եղբակացութիւն անելու, թէ քրիստոնեաների թիւը մեծ է եղել: Թեմերուած քրիստոնեաների թիւը միլիոններով չպէտք հաշուել: Նոյն այդ թեմերից շատերի համար հազարն էլ շատ է:

Ուստի և աներկիւղ կարելի է ենթադրել ամենափոքր թիւը, թէ կայսրութեան ամբողջ բնակչութեան և թէ քրիստոնեաների քանակի համար: Առաջին թիւը կարելի է հաշուել 50—60 միլիոն, իսկ երկրորդինը—4 և 5 միլիոն: Իւր ժամանակին Տերտուղիանոսը հաշւում է, թէ քրիստոնեաների թիւն աւելի քիչ է քան հեթանոսներինը: «Ի՞նչ կատաահի կարթագէնի հետ», ասում է նա կարթագէնի Պրօկօնսուլ Սկապուլին, «եթէ քրիստոնիաներին դեցիմացիայի ենթարկես» (decimacio—զինուորական զրխատում տասից մէկին): Այս նշանակում է, կոսորելով քրիստոնեաներին, նա կզրկուի բնակչութեան  $\frac{1}{10}$  մասից: Այս թիւը շատ չափազանցացրած է: Շատ հաւանական է, որ

միայն Կոստանդին Մեծի ժամանակ քրիստոնեաների քանակը ամբողջ բնակչութեան  $\frac{1}{40}$  մասին էր հաւասարւում, բայց գուցէ հարկաւոր է այս թիւն էլ փոքրացնել:

Ամէն մի ենթաղբութիւն, թէ քրիստոնեաները բնակչութեան  $10^0/0$ -ից աւելի են եղել, համարձակութիւն կլինի:

Բայց այս դէպքում պէտք է ենթաղբել, որ Կոստանդին Մեծը վճռեց յենուել բնակչութեան  $\frac{1}{10}-րդ$  մասի վերայ: Սակայն յենուել բնակչութեան  $\frac{1}{10}-րդ$  մասի վերայ, որի մասին պատմութիւնից յայտնի է, որ նա քաղաքականութեան մէջ չէր խառնւում, անհեռատեսութիւն կլինէր, և այս տեսակէտից Կոստանդին Մեծի քաղաքական դրդիչ պատճառները անբացատրելի են թուում: Յենուել բնակչութեան  $\frac{1}{10}-րդ$  մասի վերայ, յենուել այն մասի վերայ, որ քաղաքական հաշիւների մէջ չէր խառնւում, նրա համար վտանգաւոր կլինէր, եթէ նա, բացի քաղաքական հաշիւներից, ուրիշ, աւելի զաղափարական յատկութիւններով հաշիւներ աշքի առաջ չէ ունեցել:

Հալածանքների շրջանից, ճշմարիտ է, շատ դէպքեր պարզապէս ցոյց տուին որ ամբոխը քրիստոնէութեան դէմ ոչինչ չունի, սակայն այդ այն ժամանակ էր, երբ քրիստոնէութիւնը տիրապետող չէր: Մինչդեռ անյայտ էր, թէ ինչպէս կվերաբերուեն, եթէ փոքրամասնութեանը գերադասութիւն արուի, իսկ մեծամասնութիւնը յետ մղուի: Ուստի և, այդպիսի վճիռ անելու համար, հարկաւոր էին ոչ միայն քաղաքական դիտումներ այլ և հաւատ և համոզումն, որ քրիստոնէութիւնը ճշմարիտ հաւատ է: Պէտք է նկատել, որ Կոստանդինը կայսր էր և ոչ թէ մասնաւոր մարդ, ուստի և պէտք է ի նկատի առնել նաև այդ դրութեան առանձնայտկութիւնները: Տերտուղիանոսը շատ սրամիտ կերպով նկատում է, թէ քրիստոնեաներն այնքան շատ էին, որ կայսրն ինքն էլ կարող էր քրիստոնեայ դառնալ, եթէ աշխարհն առանց կայսրեր կառավարուել կարողանար: Հետեւապէս, եթէ Կոստանդինն այնպիսի մարդկանցից էր, որոնց կրօնական ողերութիւնը միանգամից է բռնկուում, այն ժամանակ նա պէտք է իւր

ծիրանին վայր դնէր: Բայց մի ամենագօր ձեռք յանձին նրա այնպիսի կայսր է տալիս, որ բաւականանում է կրօնական շրջանում ամենաքիչով: Իւր որդոցը կոստանդինը քրիստոնեաները նույցով տալիս կրթութիւն է տալիս, իսկ ինքը մնում է «pontifex maximus». առաջին տարիները դէսլի քրիստոնեաները նույցով է տալիս բաւական համեստ յարաբերութիւն, մեծ մասամբ հովանաւորող բնաւորութեամբ, օրինակ, օրէնք է հրատարակում, որով քրիստոնեաներին պաշտպանում է հրէաներից, եկեղեցուն իրաւունք է տալիս ճորտերին պատութիւն տալ, և միայն 321 թ. յայտաբարում է, որ արժանայարդ ռարեզակի օրը՝ սլէտք է քաղաքներում բոլորը աշխատանքներից ազատ լինեն, թէ որոշակի արտայատեց, որ երկրագործները պարտաւոր են նաև կիւրակի օրերը աշխատել: Կիւրակին նա այլ կերպ չանուանեց, քան «dies solis», որը շատ բան էր տում նաև հեթանոսներին:

Աչ մի հիմք չկայ ենթագրելու, թէ Հեղինէն նրա վերայ յատուկ բարերար ազդեցութիւն է ունեցել: Ընդհակառակը Ամբրոսիս մեղքովանացին ասում է, թէ ինքը Հեղինէն պարտական է կոստանդինի ազդեցութեանը: Հաւանականորէն, երիտասարդութեան ժամանակ կոստանդնի համար արժանի իոդէալ էր ներկայացնում իւր հօր օրինակի նմանուելը: Երբ կոստանդը կայսր դարձաւ, այն ժամանակ վիճակուեց աւեսնելու կոստանդնին թէ ինչողէս իւր հօր և մօր միջի կապերը խզուում էին: Իւր դիրքի պատճուով կոստանդը սլէտք է բաժանուէր Հեղինէից և պսակուէր: Մակոխիմիանոսի քոյլ ֆէօդորայի հետ: Այդ ամուսնութիւնից ունեցաւ նա որդիք, որոնք սլէտք է իրենց մէջ բաժանէին կոստանդի իշխանութիւնը: Ճշմարիտ է, կոստանդնին ևս հասկացրել էին, որ նա չի մոռացուի, այն է՝ Մակոխիմիանոսի փոքր դուստը նրան սաղաւարդ մատոյց: Բայց արեւլքում, իրօք, կոստանդինը իրին պատահնդ էր: Գալերիսսի ժամանակ նրա դրութիւնը ահնախանձելի էր: Թէհ, ճշմարիտ է, քաջազործութիւններ անելու դէսլը եղան, սակայն կեանքը վտանգի դնելով: